ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ *

ՀՏԴ 342.3 *DOI: 10.52063/25792652-2025.2.25-114*

ՇՈՒՇԱՆԻԿ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության գիտությունների
ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ ՆԳՆ ոստիկանության ավագ լեյտենանտ,
ք. Սպիտակ, Հայաստանի Հանրապետություն
ani.varderesyan@mail.ru
ORCID: 0009-0003-2304-206X

Սույն հոդվածի նպատակը երկրի կառավարման համակարգերի ներկա վիճակի և դրանց տարբեր մոդելների վերլուծությունն է՝ համաշխարհային զարգացումներին համահունչ:

Պետական կառավարման ձևերի բազմազանությունը ցույց է տալիս, թե ինչպես պետությունները, տարբեր հասարակական, տնտեսական ու քաղաքական պայմաններում, կարող են ձևավորել իրենց կառավարման մեխանիզմները,վերլուծել ու ներկայացնել այդ կառավարման ձևերը, դրանց ուժեղ ու թույլ կողմերը, ինչպես նաև տարբեր երկրներում իրենց կիրառման առանձնահատկությունները, ինչը հնարավորություն կընձեռի ավելի խորը հասկանալու ժամանակակից պետական կառավարման համակարգերի բարելավման և զարգացման հնարավորությունները:

Այս հոդվածի խնդիրն է ոչ միայն վերլուծել պետական կառավարման գոյություն ունեցող ձևերը, այլև հասկանալ դրանց ազդեցությունը հասարակության վրա. թե որքան են դրանք նպաստում քաղաքացիների իրավունքների պաշտպանության, սոցիալական արդարության, տնտեսական կայունության և ընդհանուր բարեկեցության ապահովմանը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի և համեմատական մեթոդները:

Աշխատանքում հիմնավորել ենք, որ ամբողջ աշխարհում փոփոխվող աշխարհաքաղաքական և տնտեսական իրավիճակները հաճախ ստիպում են պետություններին հարմարվել նոր մարտահրավերներին ու վերափոխել իրենց կառավարման մոդելները՝ հետագա կայունության և համաշխարհային մրցունակության համար:

Հոդվածի շրջանակներում բացահայտել ենք, թե ինչպիսի արտաքին և ներքին գործոններ են ազդում պետության կառավարման մեթոդների ընտրության վրա:

Հիմնաբառեր՝ *Պետական կառավարում, կառավարման ձև, միապետություն, պոլիտեա, արիստրոկրատական կառավարում, դեմոկրատիա, նախագահական հանրապետություն, կառավարություն:*

* Հոդվածը ներկայացվել է 28.07.2025թ., գրախոսվել՝ 07.09.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

Ներածություն

Պետական կառավարման ձևերն այսօր դարձել են ոչ միայն թիրախային թեմա պետական համակարգի հետ կապված քննարկումներում, այլ նաև առանցքային նշանակություն ունեն զարգացման գործընթացներում:

Պետական կառավարման ձևը որոշում է այն, թե ինչպես պետք է կազմակերպվեն պետության գործառույթները, ինչպես են ներկայացվում վարչական մարմինները, թե ինչպես են մշակվում քաղաքական ու սոցիալական նախաձեռնությունները, և ինչպիսի մեխանիզմներով է ապահովվում հանրային ծառայությունների մատուցումը: Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտություն է առաջացել պարբերաբար վերանայելու պետական կառավարման ձևերն ու կառուցվածքները՝ հաշվի առնելով տեխնոլոգիական զարգացումները,գլոբալիզացիան և հասարակական պահանջները:

Ներկայումս մենք ապրում ենք թվային դարում, որտեղ տեղեկատվության տարածման արագությունը և կոմունիկացիայի նոր ձևերը փոխել են ինչպես հասարակության, այնպես էլ պետական կառավարման գործառույթները:

Կառավարման ձևերի փոփոխությունը կապված է նաև երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունների հետ, որոնք նպաստում են նոր գործիքների ու մեթոդների ներդրմանը: Կառավարման ձևերը կարող են լինել դիկտատորական կամ դեմոկրատիվ, դաշնային կամ միացյալ՝ կախված երկրի համախմբման մակարդակից ու կառավարման կառուցվածքից:

Այսօր շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, առկա է օրենսդրական ու կառավարման համակարգի արդիականացման գործընթաց, որը ներառում է որոշակի փոփոխություններ թե՛ պետական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, թե՛ քաղաքացիների մասնակցության մակարդակի բարելավման նպատակով: Արդյունքում, պետական կառավարման արդի ձևերը պետք է կարողանան ավելի մոտիկ կապ հաստատել քաղաքացիների հետ, ապահովել թափանցիկություն և մասնակցություն, ինչն էլ այսօր դառնում է ոչ միայն անհրաժեշտություն, այլև հանրային պահանջ:

Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ այն հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես են առկա կառավարման համակարգերը կարողանում արձագանքել ժամանակակից մարտահրավերներին և թե ինչպիսին են լինելու այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն, որպեսզի պետական կառավարման ձևերը լինեն արդյունավետ ու կայուն մեր օրվա պայմաններում:

Պետական կառավարման բնական օրենքները և սկզբունքները

Պետական կառավարման համակարգը պետության կողմից իր գործառույթներն իրականացնելու ամբողջ մեխանիզմն է, այն ներառում է կառավարման բոլոր մարմինները, իրավական նորմերը, միջոցները և գործընթացները, որոնց միջոցով պետությունը կազմակերպում և ղեկավարում է հասարակական կյանքը:

Պետական կառավարումը՝ իբրև նպատակամղված գործունեություն, հանդես է գալիս որպես հասարակական կյանքի կարևորագույն մաս և բնորոշվում վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միևնույն ժամանակ, պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն ինֆորմացիոն բնույթ (Քալաշյան 81):

Կառավարման օրենքները, ի տարբերություն իրավական օրենքների, որոնցով բնորոշվում են հասարակական իրավահարաբերությունները, նկարագրում են ամբողջական պետական մեքենայի և նրա կառավարման մարմինների, կառավարող համակարգի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև առկա այն ընդհանուր փոխհարաբերությունները, որոնք,

ունենալով անհրաժեշտ, կրկնվող և էական բնույթ, տրվում են գիտատեսական մեկնության:

«Կառավարում» կամ «իշխում» հասկացությունը քաղաքական գիտության կարևորագույն կատեգորիաներից է: «Քաղաքագիտության առարկան է, ըստ Հ. Լասուելի,«իշխանությունն ու դրա կրողները», ըստ Ռ. Դալի՝ «իշխանության, տիրապետման կամ հեղինակության» իրականացումը, ըստ Դ. Իստոնի՝ բուն քաղաքականությունը «արժեքների իշխանական բաշխումն» է» (Мельвиль 324-328):

Իշխանությունն այն առանցքն է, որի շուրջ ձևավորվում և ամրագրվում են քաղաքական գիտությունների ուսումնասիրության տարբեր օբյեկտներն ու ուղղությունները: Իսկ ինչպիսի՞ն են լինում իշխանության ձևերը, այսինքն՝ մեր բնորոշմամբ՝ քաղաքական կառավարման ձևերը. առաջնահերթ պետք է հենց դա հստակեցնել:

«Կառավարություն» տերմինը վերաբերում է այն ինստիտուտներին ու գործընթացներին, որոնց շրջանակներում սովորաբար ընդունվում են կոլեկտիվ ու, որպես կանոն, իրականացման համար պարտադիր որոշումներ: Քաղաքական համակարգը կամ ռեժիմը ավելի լայն հասկացություններ են, ներառում են ոչ միայն իշխանության մեխանիզմները և պետության ինստիտուտները, այլև այն կառույցներն ու գործընթացները, որոնց միջոցով պետությունը համագործակցում է հասարակության հետ (Мельвиль 331-335):

Հասարակության կառավարման՝ մինչ օրս ամենաարդյունավետ ինստիտուտը եղել է պետությունը:

«Պետությունը քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտն է, որը կազմակերպում, ուղղորդում և վերահսկում է մարդկանց, հասարակական խմբերի, դասակարգերի ու ասոցիացիաների համատեղ գործունեությունն ու հարաբերությունները: Պետությունը նշանակալի է նրանով, որ նրա ձեռքում է կենտրոնացված իշխանությունն ու ռեսուրսները, ինչն էլ հնարավորություն է տալիս կառավարելու ու նպատակաուղղված կարգավորելու սոցիալական հարաբերությունները: Պետությունը քաղաքական իշխանության հատուկ կազմակերպութուն է, որն ունի սուվերենիտետ և իր հրամանների համապարտադիր բնույթ» (Решетникова 123):

Բազում այլ գործոնների շարքում պետության զարգացման կարևորությամբ է պայմանավորված նաև պետության ղեկավարող կառույցների արդյունավետ աշխատանքը և ժողովրդի կենսունակության բարձրացումը: Ակնհայտ է, որ պետության արդիականացման ճանապարհին հանդիպում են բազմաթիվ մարտահրավերներ, որոնց ոչ միայն պետք է տալ համարժեք պատասխան, այլև, այդ մարտահրավերներին դիմակայելով, հավաքել անհրաժեշտ փորձ ու հմտություններ՝ պետության զարգացման գործում խորքային ծրագրեր իրականացնելու համար (Գասպարյան և Ձալինյան 10):

Քաղաքական մտածողների ուշադրության կենտրոնում մշտապես եղել է այն հարցը, թե ինչով է տարբերվում կառավարման մի ձևը մյուսից: Դեռ Ք.ա. 4-րդ դարում Արիստոտելը նախաձեռնեց քաղաքական ռեժիմների դասակարգման մեզ հայտնի առաջին փորձը: 18-րդ դարի սկզբներին շրջանառության մեջ դրվեց երկրները միապետությունների ու հանրապետությունների, ինքնակալությունների ու սահմանադրական ռեժիմների բաժանման պրակտիկան: 20-րդ դարում ի հայտ եկան նոր առավել յուրօրինակ դասակարգումներ: «Սառը պատերազմի» ժամանակահատվածում երկրագնդի քաղաքական քարտեզը բաժանված էր «Երեք աշխարհների», որում համաշխարհային քաղաքականությունը հանգեցվում էր ժողովրդավարության ու ամբողջատիրության միջև հակամարտությանը:

Այսօր այդ դասակարգումը հնացած է, մասնավորապես՝ կապված այնպիսի քաղաքական գործընթացների հետ, ինչպիսիք են՝ կոմունիզմի փլուզումը, Արևելյան Ասիայի հզորացումը և քաղաքական իսլամի կայացումը: Այսօր դեռևս պարզ չէ՝ ինչ են

նշանակում այդ փոփոխությունները՝ արևմտյան լիբերալ դեմոկրատիայի համաշխարհային հաղթարշա՞վ, թե՞ ժամանակակից աշխարհի հետագա քաղաքական ֆրագմենտացիա (Хейвуд 28):

Կառավարման ձևեր

Կառավարման ձևը համալիր սահմանադրական-իրավական ինստիտուտի, իշխանության կազմակերպում է, որը բնութագրվում է որպես ֆորմալ աղբյուր, բարձրագույն մարմինների կառուցվածք, ունի իրավական բնույթ, ինչպես նաև նրանց միջև փոխհարաբերությունների հաստատված կարգ: Կառավարման ձևի գլխավոր որոշիչ չափանիշն է պետության գլխի իրավական կարգավիճակը (ընտրվող և փոխարինվող հանրապետություններում, ժառանգական միապետություններում):

Պետական կառավարումը՝ իբրև նպատակամղված գործունեություն, հանդես է գալիս որպես հասարակական կյանքի վերնաշենք և բնորոշվում վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միևնույն ժամանակ, պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն ինֆորմացիոն բնույթ: Կառավարման ընթացքում սուբյեկտիվ գործոնը սերտաճվում է օբյեկտիվ գործոններին, կառավարման ներքին տրամաբանությունը՝ կառավարվող օբյեկտի փոփոխության և գործունեության տրամաբանությանը:

Այս դիալեկտիկայի էությունը կայանում է սուբյեկտի օբյեկտիվացման և օբյեկտի սուբյեկտիվացման մեջ: Կառավարման օրենքները, ի տարբերություն իրավական օրենքների, որոնցով բնորոշվում են հասարակական իրավահարաբերությունները, նկարագրում են ամբողջական պետական մեքենայի և նրա կառավարման մարմինների, կառավարող համակարգի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև առկա այն ընդհանուր փոխհարաբերությունները, որոնք ունենալով անհրաժեշտ, կրկնվող և էական բնույթ, տրվում են գիտատեսական մեկնության: Պետական կառավարման օբյեկտիվ օրենքների համապատասխանելիությունը իրական կյանքին չափորոշվում է կառավարչական հարաբերություններում սուբյեկտի՝ բազմազան գործողություններով դրսևորված այն՝ էականորեն նշանակալի արդյունքներով, որոնք օժտված են պարբերական կրկնողությամբ: Սոցիալական միջավայրի վիճակից, այդ թվում՝ հասարակական համակարգի կառուցվածքից կախվածության մեջ գտնվող կառավարչական պրոցեսի վերլուծությունը, ինֆորմացիոն մոտեցման հետևողական կիրառման դեպքում, հանգեցնում է պետական կառավարման կառուցվածքային և գործառութային յուրահատուկ օրենքների բացահայտմանը (Քալաշյան 22):

Քանի որ պետությունը՝ որպես ժամանակակից պետականության ընդհանուր և համընդհանուր տեսակ, ի հայտ եկավ և հաղթականորեն զարգացավ Եվրոպայում՝ Մեծ Ֆրանսիական հեղափոխության հիման վրա, այսինքն՝ 18-րդ դարի վերջից. փաստ է, որ ժողովրդի գոյությունը որպես մարդկանց համայնք, որը միավորված է լեզվի, կրոնի, մշակույթի, պատմության, մտածելակերպի և ընդհանուր տարածքում համատեղ բնակության միջոցով, որպես կանոն, կայուն կերպով ապահովվում է միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը կառավարում է իր սեփական ինքնիշխան և անկախ պետությունը, այսինքն՝ երբ ժողովուրդը դարձել է մարդկանց քաղաքական համայնք, ազգ, այնուհետև՝ պետություն: Այս գործընթացը, ինչպես հայտնի է, ազգային ինքնորոշման սկզբունքի իրականացումն է, և պատմության մեջ սովորաբար ուղեկցվում է ուժի կիրառմամբ, հաճախ՝ արյունալի ազատագրական պայքարով (Люхтерхандт 95):

Պետության կայացածությունը, լինելով պետության նպատակադրումներին համահունչ արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակելու և իրականացնելու կարողություն, առավելապես պայմանավորված է գործունակ պետական ինստիտուտներով և դրանց աշխատանքի արդյունավետությամբ: Ներկայումս ամբողջ աշխարհում տեղի ունեցող թվային փոխակերպումները լայնորեն

ներդրվում են նաև պետական կառավարման համակարգում՝ նպատակ ունենալով ամբողջական ինտեգրված համակարգերի միջոցով ապահովելու մատուցվող պետական ծառայությունների որակը և դրանցից քաղաքացիների բավարարվածության աստիճանը (Խաչատրյան 271):

Անկասկած, կարևոր գործոն է նաև կառավարման թվայնացումը (e-Government). պետական համակարգում թվայնացման գործընթացների խթանումը նպաստում է պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը: Պետք է ընդունել նաև, որ պետական կառավարման թվայնացումը չի կարող ինքնաբերաբար հանգեցնել դրա արդյունավետության բարձրացմանը: Եթե թվայնացման արդյունքում սոսկ ստեղծվում են գերատեսչական՝ ֆունկցիոնալ առումով միմյանց կրկնող տեղեկատվական համակարգեր, ապա դրանք ընդամենը կարող են որոշ չափով նվազեցնել պետական մարմինների ու քաղաքացիների շփումը, էլեկտրոնային եղանակով որոշ ծառայություններ մատուցել, բայց ոչ երբեք հանգեցնել պետական ինստիտուտների կայացմանը: Թվայնացումը բարձրացնում է պետական համակարգի աշխատանքի արդյունավետությունը՝ նպաստելով առավել արդյունավետ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր իրագործելուն: Ուստի՝ կարելի է պնդել, որ պետության կայացածության մակարդակի գնահատման ժամանակ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել երկրի թվայնացման, պետական համակարգում թվային տեխնոլոգիաների ներդրման տարաբնույթ ցուցանիշներին (Խաչատրյան 272):

Ժամանակակից պետություններին բնորոշ է կառավարման երկու ձև՝ հանրապետություն և միապետություն (Додонов,и др . 91): Պետք է ասել, որ Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականին ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին», «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքներով նույնպես ձևավորվեց և մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը գործում էր պետական կառավարման մի այնպիսի «հիբրիդային» համակարգ, որն իր մեջ ներառում էր ինչպես միայն խորհրդային (սովետական) կառավարմանը, այնպես էլ նախագահական և խորհրդարանական կառավարմանը բնորոշ հատկանիշներ: Նախատեսվում էին, մասնավորապես, նախագահի և փոխնախագահի պաշտոններ (ինչը հատկանշական է նախագահական կառավարման ձևի համար) և վարչապետի պաշտոն (ինչը բնորոշ է կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերին): Ավելին, նախարարների խորհրդի (կառավարության) նախագահի պաշտոնի առկայության պայմաններում, «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, հենց Հանրապետության նախագահն էր ղեկավարում կառավարության գործունեությունը և նախագահում կառավարության նիստերին:

Պատմության ընթացքում մեծ հետաքրքրություն է ներկայացրել քաղաքական կյանքի և հատկապես՝ պետության տիպաբանության խնդիրը: Պետության առավել վաղ և, թերևս,հայտնի տիպաբանությունը իրականացրել է Արիստոտելը իր «Պոլիտիկա» աշխատության մեջ (Ք. ա. 4-րդ դ.). հունական պոլիսների ուսումնասիրությամբ նա տարբերակում է պետության ճիշտ և սխալ ձևեր: Ճիշտ է համարում այն պետությունները, որոնց իրական նպատակը համընդհանուր բարիքն է, իսկ սխալ է համարում այն պետությունները, որոնք մղված են միայն կառավարիչների բարիքի ապահովմանը: Ըստ Արիստոտելի՝ պետական կարգը այն է, երբ տիրապետում է օրենքով հաստատված իշխանությունը: Համընդհանուր բարիքի չափանիշից բացի կիրառում է նաև կառավարումը իրականացնող անձանց թվի չափանիշը. մե՞կն է կառավարում, մի քանի՞սը, թ՞ե շատերը (Сморгунов 93):

Պետական կառավարման ձևերը բարդ ու բազմաբնույթ են, սակայն հիմնականում դրանք կարելի է բաժանել մի քանի հիմնական կատեգորիաների, որոնք

կախված են պետության կառավարման բնույթից և հասարակության պահանջներից: Որպես նման տիպերի օրինակներ կարելի է նշել և՛ ժամանակակից, և՛ պատմական համակարգեր:

Դեմոկրատիան այնպիսի պետական կառավարման ձև է, որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդը ընտրում է իր առաջնորդներին ազատ ընտրություններով, և այն իրականացվում է բազմաթիվ տարբեր ձևերով: Դեմոկրատական կառավարման ձևերը ենթադրում են ազատություն, հավասարություն, օրենքի գերակայություն և քաղաքացիների մասնակցություն պետական գործընթացներին: Դեմոկրատիան կարող է լինել ուղիղ կամ միջնորդավորված՝ կախված նրանից, թե քաղաքացիները վերականգնում են իրենց իշխանությունը անմիջապես (ուղիղ ժողովրդավարություն) կամ ընտրում են ներկայացուցիչներ, ովքեր կառավարում են նրանց փոխարեն (միջնորդավորված ժողովրդավարություն): Օրինակ՝ Միացյալ Նահանգների նախագահական համակարգը կամ Հայաստանի խորհրդարանական համակարգը (Զալինյան 2002):

Ապարատային կամ բյուրոկրատական կառավարման ձև: Այս տեսակը հատուկ է այնպիսի համակարգերին, որտեղ պետության պաշտոնյաները հանդիսանում են ամենակարևոր գործոնները:

Ազգային կամ միանձնյա կառավարման ձև (դիկտատուրա): Այս կառավարման ձևը ենթադրում է, որ պետությունը ղեկավարվում է մեկ անձի կողմից, որի իշխանությունը չի սահմանափակվում ոչ մի օրենքով կամ հաստատությամբ: Դիկտատուրայում իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացած է մեկ մարդու ձեռքում, և քաղաքացիների իրավունքն ու ազատությունները սահմանափակվում են: Իշխանության ղեկավարը որոշումներ ընդունում է առանց հանրային քննարկման կամ ընտրական ընթացակարգերի (Զալինյան 2002):

Նախագահական կառավարում: Նախագահական համակարգը բնորոշ է այն երկրներին, որտեղ պետության նախագահը կատարում է և՛ գործադիր, և՛ աջակցող դերեր, այնուամենայնիվ կարող է նաև լինել սահմանափակված խորհրդարանական վերահսկողությամբ: Նախագահական կառավարման ժամանակ նախագահի լիազորությունները լինում են ավելի լայն, քան խորհրդարանական համակարգերում: Նախագահը շատ հաճախ ընտրվում է ժողովրդի կողմից, և նրա իշխանությունը չի զուգորդվում խորհրդարանի կամ այլ մարմինների կողմից:

Խորհրդարանական կառավարման ձևում իշխանության մեծամասնությունը խորհրդարանի ձեռքում է: Այս համակարգում կառավարության ձևավորումն ու գլխավորի նշանակումը հիմնականում կախված են խորհրդարանական ընտրություններից: Այս համակարգում նախագահի պաշտոնը կարող է լինել հիմնականում խորհրդանշական կամ սահմանափակ, մինչդեռ կառավարության ղեկավարումն իրականացնում է վարչապետը, որն ընտրվում է խորհրդարանի կողմից (Զալինյան 2002):

Անկախ պետական կառավարման ձևից՝ պետության պոտենցիալի համախառն և պաշտպանական հզորության հիմքը նրա տնտեսական ներուժն է, որը կազմում է մնացած բոլոր ներուժների հիմքը, քանի որ դրանք ենթադրում են համապատասխան տնտեսական աջակցություն (Հարությունյան 54):

Քաղաքական կառավարման կոորդինատային դասակարգում

Քաղաքական համակարգի գծային տիպաբանությունը բավական սահմանափակ օգտագործման դաշտ ունի զարգացած համեմատական վերլուծության մեջ: Քաղաքական համակարգի բաժանումը երկու հիմնական խմբերի հնարավորություն չէր տալիս մի շարք հատկանիշներով խառնված քաղաքական համակարգերի հետազոտման համար: Միաչափ չափանիշները միավորում էին քաղաքական համակարգի տիպերի պարունակային կողմը: Ուստի՝ առաջացան քաղաքական համակարգի տարբեր բնութագրական գծերի համադրման

հիմքով տիպաբանություններ: Տիպերի դասակարգման չափանիշների քանակից ելնելով՝ առանձնացվում են *երկչափ և բազմաչափ* կոորդինատային համակարգեր:

Երկչափ կոորդինատային համակարգի լավ տարբերակ է առաջ քաշում **Ռ.Դալը**՝ այն դնելով պոլիարխիայի էմպիրիկ հիմքում: Այն բավական պարզ է և էմպիրիկ համեմատական վերլուծության հիմնական հասկացությունների և հիպոթեզների համար լավ միջոց է: Դալի տիպաբանությունը դասվում է ապրիոր (փորձի վրա չհիմնված) և կոնցեպտուալ տիպաբանությունների շարքին: Այն առաջ է քաշում «Պոլիարխիա. մասնակցություն և ընդդիմություն» գրքի (1971) առաջին մասում (Даль 427-455):

Դալը իր քաղաքական համակարգի իդեալական տիպերը կերտում է երկու չափանիշների հիման վրա: Առաջինը վերաբերում է թույլատրելի ընդդիմությանը կամ քաղաքական *մրցակցությանը*: Երկրորդը վերաբերում է իշխանության համար հրապարակային մրցակցության գործընթացի մեջ բնակչության *մասնակցությանը:*

Համաձայն առաջարկած չափորոշիչների՝ առանձնացնում քաղաքական համակարգի չորս տիպեր: Եթե ընդդիմություն և քաղաքական մրցակցություն չկա կամ մոտ է զրոյին, իսկ հրապարակային պայքարին մասնակցելու իրավունք ունեցողների համամասնությունը փոքր է, ապա այդ համակարգը *«փակ գերիշխանություն»* է: Փոքր մրցակցության և մեծ մասնակցության դեպքում խոսքը վերաբերում է *«ներառող գերիշխանությանը»:* Մեծ մրցակցության և փոքր մասնակցության համադրումը *«մրցակցային օլիգարխիան»* է: Իսկ զգալի մրցակցության և մասնակցության դեպքում առաջանում է «*պոլիարխիան»*: Սովորաբար հնչեցվող դեմոկրատական քաղաքական համակարգին համապատասխանում է «պոլիարխիա» հասկացությանը: Իրական քաղաքական համակարգերը Դալի սխեմայի մեջ տեղադրելիս թերևս ուղղանկյան մեջ կենտրոնական դիրքում կհանգրվանեն (Даль 427-455):

Քաղաքական համակարգի տիպաբանության կառուցման որոշ դեպքերում կիրառվում են նաև ընդհանուր հասարակությանը վերաբերող ցուցանիշներ՝ տնտեսական զարգացում, սոցիալ-տնտեսական անհավասարություն, սոցիալական և մշակութային դիֆերեցվածություն: Նման տիպավորման վառ օրինակ է առաջարկում Արենդ Լեյպհարտը: Նա անդրադառնում է կայուն քաղաքական դեմոկրատիայի վերլուծությանը: Գտնում է, որ կայուն դեմոկրատիայի պայմաններում բնակչության դիֆերենցացման գործոնը բացատրվում է քաղաքական էլիտայի վարքով:

Էլիտաները նաև կիրառում են ենթահամակարգերի արժեքները սեփական հեղինակության բարձրացման համար, ուստի և մեծանում է հավանականությունը, որ էլիտաների միջև պայմանավորվածությունը կընդունվի բնակչության կողմից:

Ըստ այդմ՝ Լեյպհարտը կառուցում է դեմոկրատական համակարգերի իր տիպաբանությունը: Նա կիրառում է երկու չափանիշներ. հասարակության կառուցվածքը՝ միատա՞րր է, թե՞ պլյուրալիստական, էլիտայի վարքը՝ թշնամակա՞ն է, թե՞ կոալիցիոն:

Կոալիցիոն համակարգերում երկակի ֆունկցիաներ են առկա: Մի կողմից մեծ է հավանակությունը պառակտման, իսկ մյուս կողմից տարբեր ենթահամակարգերի էլիտաների համագործակցմամբ հնարավոր է կայունության հաստատում: Սա կոչում է համագործակցային դեմոկրատիա, երբ էլիտաները գործում են ողջ հասարակության արժեքների հիմքով առաջնորդվելով և պատրաստակամ են պահպանելու երկրի ամբողջականությունը: Համագործակցությունը կերտվում է վստահության և կոմպրոմիսի հիմքով:

Կենտրոնամետ համակարգերում էլիտայի թշնամական վերաբերմունքը կայունությանը չի սպառնում, քանի որ հասարակության մեջ առկա են հարաբերականորեն միատարր արժեքներ:

Կենտրոնախույս համակարգերում անկայունության վտանգը մեծ է, ինչը կապված է պլյուրալիստական արժեկողմնորոշման և էլիտաների անհամագործակցային ուղղվածության հետ (Даль 427-455):

Քաղաքական կառավարման ձևերի իր դասակարգումն է առաջարկում Բլոնդելը, նրա դասակարգումն առանձնանում է մեծ թվով փոփոխականների առկայությամբ: Խմբավորման համար նա օգտագործում է 3 փոփոխականներ՝ քաղաքական մրցակցություն, էլիտայի կառուցվածք և բնակչության քաղաքական մասնակցություն:

Քաղաքական մրցակցությունը գնահատվում է բաց կամ փակ լինելու հանգամանքով, ինչը կապված է ընդդիմության գործառնման հնարավորության հետ: Էլիտայի կառուցվածքի առանձնացումը կատարվում է էլիտայում ենթախմբերի առկայության և ինքնուրույնության հիմքով, ըստ այդմ տարբերակվում են մոնոլիտ և դիֆերենցացված էլիտաներ: Քաղաքական մասնակցությունը բնութագրվում է քաղաքական կյանքում բնակչության ընդգրկվածության աստիճանով:

Ըստ որի Բլոնդելը բաժանում է ինկլյուզիվ (ներառող) և էքսկյուլիզվ (բացառող) համակարգեր: Այս փոփոխականների համադրմամբ առաջ է քաշում քաղաքական համակարգի 6 տիպեր՝ ավանդական, էգալիտար-ավտորիտար, ավտորիտար-բյուրոկրատական, ոչ էգալիտար-ավտորիտար, մրցակցող-օլիգարխիա, լիբերալ-դեմոկրատական:

Այս բաժանումները ցուցադրում են պետության կառավարման ձևերի բազմազանությունը և դրանց տարբերությունները: Ամեն մի կառավարման ձև ունի իր առանձնահատկությունները, որոնք որոշվում են յուրաքանչյուր երկրի մշակույթով, պատմությամբ և քաղաքական համակարգով:

Եզրահանգումներ

Ամփոփելով պետական կառավարման հիմնական ձևերի վերաբերյալ ուսումնասիրությունը՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. Պետական կառավարման համակարգը ապահովում է, որ պետությունը գործի կազմակերպված, կանխատեսելի և օրինական ձևով՝ ծառայելով հասարակության շահերին:
2. Պետական կառավարման ձևերը տարբեր կերպ կարող են ապահովել երկրի քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունությունը: Դեմոկրատական համակարգերը ավելի մեծ ճկունություն են ապահովում, որտեղ քաղաքացիներն ու ժողովրդավարական ինստիտուտները կարող են կանխել իշխանության չարաշահումը, մինչդեռ դիկտատուրաները կամ բյուրոկրատական համակարգերը ավելի կենտրոնացված են, բայց կարող են բերել կառավարման ծանրաբեռնվածության կամ չարդարացված ուժի կիրառման:
3. Կառավարման տարբեր ձևերի արդյունավետությունը կախված է պետության պատմությունից, մշակույթից, ավանդույթներից և քաղաքական մշակույթից: Դեմոկրատիան կարող է լինել ավելի երկարաժամկետ կայուն, բայց անհրաժեշտ է բարձր քաղաքացիական գիտակցություն և օրենքների հետևողական կիրառություն, մինչդեռ դիկտատուրաները կարող են արագ գործել, բայց հաճախ հանդիպում են ժողովրդական հակադրությունների:
4. Պետության կառուցվածքը որոշվում է հիմքում ընկած քաղաքականությամբ, այսինքն՝ ինչպիսի քաղաքական ուղղվածություն կամ գաղափարախոսություն կունենա տվյալ երկիրը, այդպիսին կլինի նրա պետական կառուցվածքը :
5. Հանրային մասնակցություն: Դեմոկրատական կառավարման ձևերը առավելապես կենտրոնացած են քաղաքացիների մասնակցության վրա, որտեղ

հանրությունը կարող է ազդել կառավարման գործընթացի վրա՝ ընտրությունների, հանրաքվեների կամ այլ մեթոդներով: Իսկ ապարատային կամ միանձնյա կառավարման ձևերում հանրային մասնակցությունը սահմանափակված է կամ նույնիսկ բացակայող է:

6. Պետական կառավարման տարբեր ձևերում իշխանության սահմանափակումները տարբեր են: Դեմոկրատիաներում իշխանությունը մոնիթորինգի և պատասխատվության ներքո է գտնվում, քանի որ քաղաքացիներն ունեն վերահսկողություն իրենց ընտրված պաշտոնյաների նկատմամբ:

7. Քաղաքական կառավարման դասակարգման լավագույն տարբերակը ձևաբանական կոորդինատային բազմաչափ դասակարգումն է:

8. Քաղաքական կառավարման այս կամ այն դասակարգման հիմքում ընկած է տվյալ մտածողի արժեկողմնորոշումը, որից էլ բխեցվում է դասակարգման չափանիշը:

9. Պետական կառավարման համակարգի զարգացումը պահանջում է երկարաժամկետ ռազմավարություն, որը միավորում է կառույցների բարեփոխում, տեխնոլոգիական նորարարություն և քաղաքացիական մասնակցություն:

10. Ո՛չ մի կառավարման ձև իդեալական չէ. հաջողությունը կախված է ոչ միայն ինստիտուտներից, այլև քաղաքական մշակույթից, քաղաքացիական գիտակցությունից և իրավական պետության սկզբունքների պահպանումից:

Ժամանակակից միտումներն են.

Թվայնացում (e-Government)–էլեկտրոնային ծառայություններ, բաց տվյալներ:

Մասնակցային կառավարում – քաղաքացիների ներգրավում որոշումների կայացման մեջ:

Կայուն զարգացում – շրջակա միջավայրի և սոցիալական հավասարակշռության պահպանում:

Այս բոլոր բաղադրիչները միասին ապահովում են այն, որ պետությունը կարողանա արդյունավետորեն կազմակերպել հասարակական կյանքը և արձագանքել փոփոխվող պայմաններին:

Այս եզրահանգումներն ընդգծում են, որ պետական կառավարման ձևը ոչ միայն ձևավորում է երկրի քաղաքական համակարգը, այլև ազդում է հասարակության զարգացման, պետական կայունության և քաղաքացիական ազատությունների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արսենյան,Գևորգ և ուրիշներ. *Պետական կառավարման հիմունքներ.* ՀՀ ԳԱԱ «Գիտություն». 2001, էջ 204:
2. Գասպարյան, Մխիթար և Ջալինյան, Աշոտ. *«Պետականաշինության մշակույթը որպես պետության բնականոն արդիականացման գրավական».Հանրային կառավարում*, 2, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա,Երևան, 2021, էջ 10-21:
3. Ջալինյան, Աշոտ.*«Պետական կառավարման համակարգերի տեսակներն ու առանձնահատկությունները:Մտորումներ պետական կառավարաման բարեփոխումների և պետական ծառայության զարգացման մասին».«Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում»* Գիտական աշխատությունների ժողովածու, N1, 2002,էջ 10:
4. Խաչատրյան, Կառլեն. *«Թվայնացումը որպես պետության կայացածության բաղադրիչ». Գիտական Արցախ*, №3 (10), Երևան, 2021, էջ 265-274, DOI: 10.52063/25792652-2021.3-265:
5. Հարությունյան, Արտակ. *«Պետության ռազմական անվտանգության ներուժը. Էությունը, կառուցվածքը և առանձնահատկությունները»*. ԱԵԳՄՄ «Գիտական Արցախ» պարբերական, N 1(8), Երևան, 2021, էջ 54-63, DOI: 10.52063/25792652-2021.1-47:

6. Սարգսյան,Մերի.*«ՀՀ կառավարման ձևի բարեփոխման հրամայականը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում».*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014. նստաշրջանի նյութերի ժողովածու. Երևան, 2015, էջ 67-85:

7. Օրդյան,Էդուարդ.*«Պետական կառավարման համակարգը Հայաստանում, ձևավորումը, բարեփոխումները և հիմնահարցերը»*. Երևան, ՀՀԿԴ, «Պետական ծառայություն», 1998:

8. Քալաշյան,Վաչե.*«Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները և առաջնահերթությունները». «Նորավանք»* գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2003,էջ 81:

9. ---.*Պետական կառավարման արդյունավետությունը.* ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 165:

10. ՀՀ Նախագահի հրամանագիր *«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին».*ՀՀԱԺՏ 1995. 1-2:

11. --- . *«Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին».* ՀՀՊՏ 2007.07.25/37 (561), հող. 829:

12. Аристотель. *Политика. Сочинения в 4-х томах.* Т.4. Перевод Сергей Жебелева, Мысль, 1983, стр. 502.

13. Додонов, Вячеслав и др. «*Большой юридический словарь».* Инфра-М, М., 2001, стр. 591.

14. Глазунов, Николай. *Система государственного управления: Учебник для вузов.* М., 2002.

15. Даль. «Демократия и ее критики». Пер. с англ. Под ред. 2003, стр. 427-455.

16. Люхтерхандт, Отто. *«Исторический опыт и уроки Армянской государственности – взгляд со стороны». Научный Арцах*, №1, ОМУСА, 2018, с. 95-102.

17. Мельвиль, Андрей. *Политология: учеб*. М. 2008, с. 559.

18. Пикулькин, Александр. *Система государственного управления*. 1997.

19. Сморгунов, Леонид.*Сравнительная политология: Теория и методология измерения демократии.* СПб., 1999, с. 93.

20. Светлана, Решетникова. *Политология: учебник*. под ред., 6-е изд., Минск, 2010, с. 123.

21. Хейвуд, Эзра. *Политология: Учебник для студентов вузов.* Пер. с англ. под ред., Водолазова, Григорий. В. Вельского., М.: ЮНИТИ-ДАНА, 2005, с. 28.

WORKS CITED

1. Arsenyan,Gevorg yev urishner. [Fundamentals of Public Administration]. HH GAA «Gitut'yun». 2001, ej 204. (in Armenian)

2. Gasparyan, Mkhit'ar yev Zalinyan Ashot. [The Culture of State-Building as a Guarantee of the Natural Modernization of the State]. Hanrayin karravarum, 2, Hayastani Hanrapetut'yan petakan karravarman akademia,Yerevan, 2021, ej 10-21. (in Armenian)

3. Zalinyan, Ashot. [Types and Characteristics of Public Administration Systems. Reflections on Public Administration Reforms and the Development of Public Service. "Information technologies and management] #1, 2002. (in Armenian)

4. Khach'atryan, Karrlen. [Digitalization as a Component of Statehood], Gitakan Arts'akh, №3(10), Yeyevran,2021,ej 265-274, DOI: 10.52063/25792652-2021.3-265. (in Armenian)

5. Harut'yunyan, Artak. [The State's Military Security Potential: Essence, Structure and Features]. AYEGMM-«Gitakan Arts'akh» parberakan, N 1(8),Yerevan 2021,ej 54-63, DOI: 10.52063/25792652-2021.1-47. (in Armenian)

6. Ordyan, Eduard. [The State Administration System in Armenia: Formation, Reforms and Key Issues,Yerevan]. HHKD, «Petakan tsarrayut'yun», 1998. (in Armenian)

7. Sargsyan, Meri. [The Imperative of Reforming the Form of Government of the Republic of Armenia in the Context of Increasing the Effectiveness of the Constitutional Mechanisms of Separation and Balance of Powers]. YePH iravagitut'yan fakulteti aspirantneri yev hayts'ordneri 2014 t'. nstashrjani nyut'eri zhoghovatsu, Yerevan, 2015, ej 67-85. (in Armenian)

8. K'alashyan, Vach'e. [Prospects and Priorities of the Development of the State Administration System,Yerevan], «Noravank'» gitakrt'akan himnadram», 2003t'. 81 ej. (In Armenian)

9. K'alashyan, Vach'e. [The Effectiveness of Public Administration] YePH hratarakch'ut'yun,2014,165 ej. (in Armenian)

10. HH Nakhagahi hramanagir [On Establishing the Structure and Procedure for the Activities of the Government of the Republic of Armenia] HHAZHT 1995.1-2. (in Armenian)

11. --- [On Establishing the Procedure for Organizing the Activities of the Government of the Republic of Armenia and Other State Administration Bodies Subordinate to it]. HHPT 2007.07.25/37 (561), hod. 829. (in Armenian)

12. Aristotel', Politika, Sochineniya v 4-x tomax [Politics Writings in 4 volumes] .M., Mysl', 1983. T.4. Perevod Sergej, Zebeleva. 502 9. Dodonov, Vâčeslav. Ermakov ,Dmitrij . Krilova Marina M. i dr. M. (in Russian)

13. Bol'shoj ûridičeskij slovar' [Great Legal Dictionary].Infra-M, 2001. S. 591. (in Russian)

14. Glazunov, Nikolaj. Sistema gosudarstvennogo upravleniya [System of State Administration] .Uchebnik dlya vuzov. M., 2002 (in Russian)

15. Dal', Demokratija i ee kritiki [Democracy and its critics]. Per. s angl. Pod red. M.V.Il'ina. — M., 2003. S. 427-455. (in Russian)

16. Lyukhterkhandt, Otto. Istoricheskij opyt i uroki Armjanskoj gosudarstvennosti – vzgljad so storony [Historical Experience and Lessons of Armenian Statehood – a View From the Outside] Gitakan Arc'ax, №1, 2018 t' S.95. (in Russian)

17. Mel'vil' Andrej. Politologija [Political Science]. M. 2008, S. 559

18. Pikul'kin, Aleksandr. Sistema gosudarstvennogo upravlenija [System of State Administration].M. 1997. (in Russian)

19. Smorgunov. Sravnitel'naja politologija: Teorija i metodologija izmerenija demokratii [Comparative politics: Theory and Methodology of Democracy]. SPb., 1999. S . 93. (in Russian)

20. Svetlana, Rešetnikova. Politologiâ: učebnik /pod red.. 6-e izd. Minsk. 2010, S. 123. (in Russian)

21. Hejvud, Ezra. Politologiâ [Political Science]: Uchebnik dlya studentov vuzov / Per. s angl. pod red. Vodolazova, Grigorij,Vel'skogo. M.: UNITI-DANA, 2005.s. 28. (in Russian)

THE CONTEMPORARY MAIN FORMS OF PUBLIC ADMINISTRATION

SHUSHANIK VARDERESYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D. Student,
Senior Lieutenant of the Police of the
Ministry of Internal Affairs of the Republic of Armenia
Spitak, the Republic of Armenia

The purpose of this article is to review the current state of the country's governance systems and their various models in line with global developments.

The diversity of forms of government shows how states can shape their governance mechanisms in different social, economic and political conditions, analyze and present these forms of government, their strengths and weaknesses, as well as the peculiarities of their application in different countries, which will provide an opportunity to more deeply understand the possibilities for improving and developing modern public governance systems.

The task of this article is not only to analyze the existing forms of state governance, but also to understand their impact on society - to what extent they contribute to the protection of citizens' rights, social justice, economic stability and general well-being.

The research used analysis, synthesis, induction, deduction and comparative methods.

In the work, we have substantiated that changing geopolitical and economic situations around the world often force states to adapt to new challenges and transform their governance models for future stability and global competitiveness.

Within the framework of the article, we have identified what external and internal factors influence the choice of state governance methods.

Keywords: *State administration, form of government, monarchy, polity, aristocratic government, democracy, presidential republic, government.*

ОСНОВНЫЕ СОВРЕМЕННЫЕ ФОРМЫ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

ШУШАНИК ВАРДЕРЕСЯН
соискатель Института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения,
старший лейтенант полиции Министерств внутренних дел
Республики Армения,
г. Спитак, Республика Армения

Целью данной статьи является рассмотрение текущего состояния систем государственного управления страны и их различных моделей в соответствии с глобальными событиями.

Разнообразие форм государственного управления показывает, как государства могут формировать свои механизмы управления в различных социальных, экономических и политических условиях, анализ и представление этих форм правления, их сильные и слабые стороны, а также особенности их применения в разных странах, что позволит глубже понять возможности совершенствования и развития современных систем государственного управления.

Задача данной статьи — не только проанализировать существующие формы государственного управления, но и понять их влияние на общество: в какой степени они способствуют защите прав граждан, социальной справедливости, экономической стабильности и общему благосостоянию.

В исследовании использовались методы анализа, синтеза, индукции, дедукции и сравнительного анализа.

В работе мы обосновываем, что меняющаяся геополитическая и экономическая ситуация в мире часто вынуждает государства адаптироваться к новым вызовам и трансформировать свои модели управления для обеспечения будущей стабильности и глобальной конкурентоспособности.

В рамках статьи мы выявили, какие внешние и внутренние факторы влияют на выбор методов государственного управления.

Ключевые слова: *государственное управление, форма правления, монархия, политическое устройство, аристократическое правление, демократия, президентская республика, правительство.*